



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 10 » հոկտեմբերի 2019թ.

№ 666 -Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 342-Լ  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 6-ի «Մաքսային գործառնությունների իրականացման վայրերը սահմանելու մասին» N 342-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ լրացումները.

1) հրամանի 2-րդ կետի 1-ին պարբերության մեջ «ստորաբաժանումներում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հրամանի 2.1-րդ կետում նշված դեպքերի» բառերը.

2) հրամանի 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 2.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող տրանսպորտային միջոցները, որոնց արտահանման երկիրը Վրաստանի Հանրապետությունը կամ Ճապոնիան է (բացառությամբ նշված դիրքին դասվող այն տրանսպորտային միջոցների, որոնք ՀՀ սահմանը հատում են բեռնարկղերով), «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս, ինչպես նաև վերոնշյալ ապրանքային դիրքին դասվող (բացառությամբ նշված դիրքին դասվող այն տրանսպորտային միջոցների, որոնք ՀՀ սահմանը հատում են բեռնարկղերով) և ազատ շրջանառության համար բացթողնման նպատակով որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծվող ապրանքների, որոնց արտահանման երկիրը Վրաստանի Հանրապետությունը կամ Ճապոնիան է, նկատմամբ մաքսային գործառնություններն իրականացվում են ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչությունում կամ Հարավային մաքսատուն-վարչությունում՝ ՀՀ սահմանի հայ-իրանական հատվածով մաքսային տարածք ժամանման դեպքում:».

3) հրամանի 3-րդ կետի 1-ին պարբերության մեջ «գործառնությունները» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հրամանի 2.1-րդ կետում նշված դեպքերի, երբ այդպիսի մաքսային գործառնություններն իրականացվում են տվյալ կետում նշված վայրերում,» բառերը.

4) հրամանի 3-րդ կետի 2-րդ պարբերության մեջ «գործառնությունները» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հրամանի 2.1-րդ կետում նշված դեպքերի, երբ այդպիսի մաքսային գործառնություններն իրականացվում են տվյալ կետում նշված վայրերում,» բառերը.

5) հրամանի 3-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն հրամանի 2.1-րդ նշված դեպքերում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 16-րդ գլխով սահմանված մաքսային գործառնություններն իրականացվում են նույն կետով նշված ստորաբաժանումների գործունեության գոտում գտնվող մաքսային հսկողության գոտիներում և (կամ) ժամանակավոր պահպանության վայրերում կամ սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վայրերում:»:

2. Մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելը «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի ներքո գտնվող կամ սույն հրամանի 2.1-րդ կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումներից տարբերվող այլ ստորաբաժանումներում կամ




դրանց գործունեության գոտում գտնվող վայրերում ժամանակավոր պահպանության տակ գտնվող ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններն իրականացվում են այն մաքսային մարմիններում, որոնք հանդիսանում են տվյալ ապրանքների նշանակման մաքսային մարմիններ կամ որոնց գործունեության գոտում դրանք գտնվում են:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 14-ից:

 Recoverable Signature



X 

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ